# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 25.04.2023թ. կնքված N ԳԵՂ ՋՕԸ-ԳՀԾՁԲ-23/1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի

ք. Գավառ «22» մայիսի 2023թ.

«Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերությունն ի դեմս ընկերության տնօրեն՝ Ա. Սարդարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հայ-Գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Սանթրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 25.04.2023թ. կնքված N ԳԵՂ ՋՕԸ-ԳՀԾՁԲ-23/1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1, 7.5 և 7.13 կետերի դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված է «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերության կարիքների համար ջրաչափական համակարգի տեղադրման և սպասարկման ծառայությունների մատուցումը (այսուհետև՝ ծառայություն).:

1.2 Սույն համաձայնագրով մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 840.000(ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

1.3 Հաստատել գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագիրը (հավելված 1) և վճարման ժամանակացույցը (հավելված 2) նոր խմբագրությամբ:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Գեղարքունիք» ջրօգտագործողների ընկերություն | Հայ-Գերմանական «Արազեն» ՀՁ ՍՊԸ |
| ք. Գավառ, Զոր. Անդրանիկի 59 | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս 10 շենք, բնակարան 8 |
| <<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Կամո>> մ/ճ | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 247180023134 | Հ/Հ 1150019189589537 |
| ՀՎՀՀ 08414847 | ՀՎՀՀ 01228289 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |